

Պեշուանտ կոչի: Փաղթականը օրինօք հաստատած են ամենքնին ալ պարտաւորելու ՚ի զինուորութիւն, 16 տարեկանէ մինչև ՚ի 60 տարեկան. և զլիաւորներն որ ընարուին չեն կրնար հրաժարիլ բայց եթէ տուգանք տալով, տեղակալն 25 դալէռ, հրամանատարն 100, ընդհանուր հրամանատարն 200, Հասարակաց եկամուտն իբրև կէս միլիոն ֆրանգ է: Ամեն երիտասարդ որ ունենայ սայլ մը, հրացան, 8 կամ 10 եզն՝ օրինօք կրնայ ամուսնանալ: Մեծ մասն արուեստաւորք են ատաղձագործք, 8 մեզր երկայնութեամբ փայտեր կը կտրեն, և հատն իբր 12-15 ֆրանգի կը վաճառեն: Քիչ երկրագործքն կը մշակեն մայիլ և ցորեն: Վիսաւոր պաճառքնին է փղոսկր և ռնգեղջիւրի ոսկր, ժանիք գետածիոց, մորթք կենդանեաց, բամբակ, խսիր, եզն, և այլն. զորս սովորաբար Անգղիացի գաղթականաց կը վաճառեն: Իսկ իրենք կ'ընդունին առնոցմէ վառօդ, զէնք, կապար, անագ, գաֆէ, չաբար, հնդկային կտաւ, զգետ, զլիսարկ, դեղորայ, և այլն: Երկիրն կը բերէ առատ արմրտիք և բանջարեղէն, խաղող, թուզ, գեղձ, նարինջ, գետնախնձոր, լուբիա, և այլն:

ԴԱՐՉ ՍԱՄՈՒԷԼԻ ՊԵՅՔԵԼԻԻ ՅԱՆՎԴԻԱԸ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐՇԱՊԱՆԱՅՆ Ի ՎԵՐԻՆ ՆՆՂՈՍ

Զորս հինգ տարիէ վեր թէ քաղաքական և թէ ուսումնական օրագիրք երբեմն երբեմն իւրիշին Սամուէլ Պէյքըր Անգղիացի հոչակեալ ուղևորը, որ Եգիպտոսի խելտիվին համար կարևոր գործոյ մը ձեռք գտնելով՝ անկէ զօրավար և փաշայ ալ առնանեցաւ: Պէյքըր ասկէ տասն տարի առաջ աշխարհագրական քննութեանց համար իր տիկին ամուսնոյն հետ Ալիքիէի խորքեր մտնէր, Նեղոս գետի վերին հովտաց մէջ, անոր աղբիւրները գտնալու, և

գտաւ մեծ և ընդարձակ լճեր, որոյ համար շատ ալ հոչակուեցաւ յԵրոսպա. բայց ինքն նման խիլիկսդոնի և այլոց, կ'ուզէր աւելի գտնել և աւելի ստուգել այն զեռանձանօթ կամ սակաւածանօթ անտառատաց մէջ, ուր կէս դարէ վեր շատ գիտնական ուղևորք կը յաճախեն, և ոչ սակաւք կամ ոչ աննշանք զոչ ալ եղան իրենց փախարին չհասած՝ բնական կամ բուն մահուամբ: Ինութիւն և բոնութիւն երկու մեծ արգելք կամ զգարութիւնք են Ալիքիէի հետաքոտութեանց. առջինէն՝ ուղևորք կարելոյն չափ հոգալով և զգուշանալով (ի տօթոյ, ջրոյ պահութենէ, ճամբաներու գէլութենէ, գաղաններէ, և այլն), աւելի քիչ վախ ունին քան երկրորդէն, որ է մարդկային բռնութիւն: Գայտ է որ Ալիքիէի խորքն ինքնագլուխ բարբարոս կամ անկիրթ ժողովուրդք կան, որք զանազան պատճառաւ կ'արգիլեն Երոպացի հետախոյ լուղևորները, և երբեմն մահուամբ ալ: Վիսաւոր պատճառաց մէկն ալ է զգուշի վաճառքն գերեաց. բարբարոսքն կամ անգութ ազակ վաճառականք՝ իրենց մեծ և պիղծ չափ աղբիւր բրած են աւելի հանգարտ և ընտանի ցեղերու երիտասարդները, թէ այր թէ կին, որսալ իբրև երէ վայրի, բռնել խաբէութեամբ և ծախել ուրիշներու, որք և զանազան աշխարհներ կը տանին խեղճերը աւելի կամ պակաս տառապանօք ծառայեցնելու: Վերջի տարիներու Երոպայի տէրութեանց բրած ջանքն այսպիսի անվայել գործք զաղբիւրներու յայտնի է հասարակաց: Սամուէլ Պէյքըրի վերջին արշաւանքն կամ աշխատանքն ալ եղաւ այս բանիս համար, կամօք և օգնութեամբ Եգիպտոսի խելտիվին. և անալ այս աշխատանքի յետէ մեր գրիիւքն ալ, համառօտելով նոյն ինքն Պէյքըրի տուած համառօտ տեղեկութենէն:

Այս անգղեկութիւն հանդիսական կերպով մը տուաւ Պէյքըր անցնալ տարւոյն վերջը, յ' 8 զեկտեմբերի, յԱլիքիէէ նոր դարձած, ՚ի ժողովի հոչակաւոր Աշխարհագրական Ընկերութեանն լոնտոնի, ուր այն իրիկունք բաց ընկերաց՝ ժողովրդ էին բազմութիւն գիտնական և պատուական անձանց, որոց զլուխ Անգղիոյ Թագաժառանգն և իրեղբայր Խորմալուրկի զուքս՝ արքայազուրկ. որոց ներկայացուց զուղևոր՝ ժողովոյն Նախագահն Պարզ Ֆրէր. և յետ իր և ասոր կարճ յառաջաբան խօսից՝ Պէյքըր սկսաւ խօսիլ և պատմել յիշեցնելով ինքն որ խորին Ալիքիէի կամ Վերին Նեղոսի երկիրներու մէջ կան իբր 10 կամ 15,000 գերիտրսակք՝ Ստանի կամ

Արաբացւոց անարգ ցեղերէն, որք փոխա-
նակ իրենց երկիրները մշակելու կամ ու-
րիշ արուեստի պարագայելով այս Ափրիկոյ
բարձր կողմերը կը դարանին, աղիկներ
կամ մանչեր գողնալու: Ասոնց խեղճու-
թեան ականատես և ականջալուր ըլլալով
Եւրոպացի ուղևորք, հիպպատք և նոյն
ինքն Պէյքըրը, շատ անգամ խօսեցան աղա-
չեցին Նիգիպտոսի իշխանութեան. այս բա-
նիս արգելք մ'ընելու հաւաներ էր խեղճ-
վոն ալ, այլ հնարքը կը մտածուէր. զոր գտաւ
իր բազմահնար պաշտօնեայն և մեր ծանօթ
Ղուպար փաշայն, և առաջարկեց առ Պէյ-
քըր, այն առնել որ Անգղիոյ Թագածա-
ռանգ իշխանն և իր բամբինն ալ եկած էին
Նիգիպտոս շրջան մ'ընելու, առաջնորդու-
թեամբ Պէյքըրի. խօսեցաւ սա ընդ Թա-
գաւորագինն, և նա ընդ խեղճին, զոր և
յորդորեց այսպիսի կարևոր և մարդասի-
րական գործ մը զանց չընելու. երկուքն ալ
միաբան յորդորեցին զՊէյքըր՝ զոր արգէն
տրամադրեր էր Ղուպար. և նա իր ազգին
պարծառներն և պաշտպանութիւնը, մանա-
ւանդ իր ապագայ Թագաւորին մտածե-
լով, ինչպէս կ'ընէ, յանձն առաւ:

Հարկ էր հիմա ընելիքնին սահմանել և
պարզել. խեղճին կ'ուզէր խորին Ափրի-
կէի մէջ իր իշխանութիւնը հաստատել և
երկիրը նուաճել, որպէս զի կարող ըլլայ
դադրեցնել գերեմվաճառը. ասոր համար
ալ Հարկ էր զինուց զօրութիւն. սահմանե-
ցաւ տալու մեր Անգղիացւոյն 1700 մարդ-
կան զուեղ մը, ընդ ձիաւոր և հետեակ:
Հօս Պէյքըր զովութեամբ յիշելով Նիգիպ-
տոսի քաղաքական բարգաւաճանքը, միայն
երեք մարդկան կ'ընծայէ արդիւնքը, որք
են ինքն խեղճին, Ղուպար փաշայ և Շե-
րիֆ փաշայ. և թէ ասոնց փափագին և
լինից ամենէն մեծ արգելքն ալ հնայեալ
սովորութիւնն է. և պէտք էր որ այս ալ
շատ դժարացնէ Պէյքըրի գործը, մանա-
ւանդ օտարազգի և քրիստոնէայ ըլլալով.
ինքն ալ այսպիսի կասկածով, սակայն արի-
ւութեամբ ձեռք զարկաւ, քանի մը Եւրո-
պացի զինուորական օգնականներն առնը-
լով հետը, յորոց մէկն էր իր եղբորորդին,
և Մարգդ-Բոլոյ խալալացին, որոյ յանձ-
նուեցաւ կահից և պաշարոյ հոգն. Բայց
այն միջոցին Սիւէզի ջրանցից բացման զբա-
ղանքն փրայ հասնելով ուշացուց Պէյքըրի
ճամբայ եննելը. և իր առաջուց 'ի խար-
դում զրկած զօրքն և գլխաւորքն՝ գործը
չսկսած՝ աւելի սկսեր էին, այն տեղի գե-
րեաց վաճառականներուն իմացնելով ըլ-
լալովը. որով նաւարկութեան դժարութիւն
հասնեցին. սակայն յարմարցուց Պէյքըր

երբ հասաւ հօն, և ճարեց 800 հոգւոյ հա-
մար նաւեր. ու մտաւ 'ի Նեղոս, 1869ին
վերջերը:

Երբ հիւս. լայնութեան 90 21' աստիճա-
նին տակ հասաւ, փոխանակ յորդ. և բարձր
ջրոյ՝ ընդարձակ ճաշիճներ գտաւ. միայն
նեղ ջրանցք մը կար (Պաշր-Իւլ-Ջիւրաֆ)
որ կ'երթար 'ի Վերին Նեղոս, այն ալ գե-
տային բոյանքով խաւկած. այնպէս որ գե-
րեմվաճառք իրենց թեթև նաւակներով զից
ամիս կ'ընէին այս նաւարկութիւնը. այն
գժուար սահմանին անդին երկիրն ալ ա-
զատ բարբարոսաց երկիր էր: Շատ ջան-
քով հնգիւ 50 մղոն կորցան կորել այն
եղեգնապատ ճահճաց մէջ. կը սպասէին
անձրեաց որ ջուրը առատացնէ. բայց ան-
ձրեք ալ յանկարծ անանկ հեղեգաբար ի-
ջան, որ նոր դժարութիւն մը բանալով, և
արդէն իւր 100 մարդ կորած ըլլալով,
ստիպուեցան յետ դառնալ. բայց փոխա-
նակ 'ի խարդում երթալով Պէյքըր խոհե-
մութիւն համարեց Սոպադ գետին բերա-
նը երթով, և հօն բանակեցող մը ձևացուց:
Գերեմվաճառք կարծելով որ նա 'ի խար-
դում դարձաւ եկան համարձակ իրենց նա-
ւակօք և գերիներով, և ընկան Պէյքըրի
ձեռքը. որ վաճառականաց զլխաւորները
չղթայելով՝ խաւրեց 'ի խարդում, գերի-
ներն ալ ազատեց:

Երկրորդ տարին (1870) նոր օգնական-
ներ ընդունելով և նոր գործինքն արգելք-
ները բանալու, 1200 հոգւով ճամբայ ելաւ,
աւելի տղմի քան ջրոյ մէջ քալելով, և շատ
սխաւանսօք թեթև նաւակներով հնգիւ
չորս ամսէն վերջը մտան Նեղոսի ջրերու
մէջ, և 1500 հոգւով հասան 'ի Կոնտորո-
րոյ (30 աստիճանի տակ): Բայց գերեմվա-
ճառք իրենցմէ առաջ հասնելով՝ զրգուր
էին տեղացիները. որով Պէյքըր բարեկամ
չգտաւ, նոյն իսկ անոնց մէջ որոց զուակ-
ներն գերի կ'երթային. Քարոզչի պէս սկը-
սաւ անոնց զլխաւորաց հետ խօսել թէ ինչ
անարգ և խեղճ բան է թողուլ որ դաւա-
նին հեռու տեղուանք տարուին և անաս-
նոց պէս ծառայեն: Նսեկու առնէ սրտեր-
նին կը շարժէր, բայց իրենց հարկաւոր հա-
մարած բաները՝ զաւակներէն աւելի կ'ըն-
տրէին. Այս բաներուն առաջինն էր եր-
կաթ, իրենց զինուց հարկաւոր, և այն կող-
մերը չի գտուիր. օր մը երբ Պէյքըր անոնց
ամենէն խելացի կարծուած զլխաւորին հետ
խօսեցաւ կամ քարոզեց ու լռեց, նա հար-
ցուց իրեն թէ որդի ունի. — Յաւիմ որ
չունիմ, քսաւ Պէյքըր. — Իսկ ես մէկ հատ
մ'ունիմ, քսաւ նա, ութ տարուան է, բայց
անթութեանէ անանկ նիհար և տկար, որ

եթէ գու գնես՝ առաւօտէ մինչև իրիկուն պիտի ուտէ. ինծի գանձակի բերան մը տուր, և առ գաւակս: — Իմացաւ Պէյքըր որ գերի գնդներէն աւելի զերեաց ծնողքն են յանցաւոր և օւղղելի. և հարկ էր իւրաքանչիւր ցեղից մէջ մտնել և համոզել զանոնք՝ զազգրելու այն տարրից վաճառքէն:

Այս ցեղից մէջ ամենէն զօրաւոր և պատերազմողն էր Պարի կոչուածն, որ և ամենէն աւելի զերիտրտակ. հարկ եղաւ ասոր հետ զենքով կոռելու, և հպիւր երկու ամսէն նուաճեցաւ: Բայց Պէյքըրի աւանդէն զօրաւոր թշնամիքն իր բանակին մէջն էին. սպայք գլուխ վերուցին, և իրիկուն մը թուղթ հասուցին ձեռքը, որով կ'իմացնէին թէ իրենք կ'ուզեն թողուլ զառանք 'ի Խարքում: Պէյքըրի եղբոր որդին և քիչուոր հայրենակիցք՝ աւելի կ'ընտրենք, բսին, հօս մեռելի քան վատութեամբ յետ գառնալ. ո՛վ որ կ'ուզէ երթայ, Պէյքըր հաւատարմացը հետ մտածելով փոխանակ թղթին պատասխանելու, իբր թէ լուր մը չէր առած՝ հրաման հանեց որ վեց խումբ պատրաստուի Պարեաց դէմ երթալու, և գիշերանց ճամբայ հանեց. ու 26 օր պատերազմելով՝ թշնամեաց տեղերէն շատ մը հացի պաշար առաւ, որ իրենց վեց ամսուան համար բաւեց, և բանակին ազմուլի մտնեց. անհասանք ելան դարձան 'ի Խարքում:

Հիմա բնութեան դժարութեան հետ ալ հարկ էր կոռելու, ճամբայ բանակին համար. որովհետև թէ և երեք աղէկ չուգէ վար մեքենայ ունէին, բայց երկաթուղի չկար. բեռերնին կրելու համար ալ ոչ ուղտ ունէին, ոչ ուրիշ գրաստ, և ոչ բարեկամ: Պէյքըր գիտէր որ Պարեաց երկրէն անգին Լոպորէ կոչուած ցեղ մը կայ, աղէկ բեռնակիր, բայց իրենց վարձ՝ կով մը կ'ուզեն. հարկւր մարդով ելաւ ճամբայ քանի մը կով և քանի մը զգեստ տանելով. և սկսան զեղեցիկ և բազմամարդ երկրի մը մէջ ճամբայ ընել, ուսիցից ուրիշ անգամ ալ անցեր էր Պէյքըր և ուրիշ ճամբորդք. որ զեղը որ կ'իջնէին՝ առած կերակուրին տեղ կով մը տալով՝ կ'երթային անմիաս. այս կերպով 300) տալլամար ժողովեց և 50 մարդով զրկեց 'ի Կոնստանդուպոլս, ու բեռները բերել տալով՝ եկան 'ի Ֆաթիքոյ, հիւս. 3⁰ տակ: Այս երկիրս Աֆրիկէի մէջ գրայտաւ մը կը նմանի, կ'ընէ Պէյքըր, լեռանց մէջ է և 4000 ոտք ծովուն երեսէն վեր. տաքութիւնն սովորաբար 80 աստիճանի (Ֆարէնայդի) չի հասնիր. յիւրախ անձրեակց եղանակն ինն ամիս կը տևէ, բայց ամեն օր ալ չանձրեակ, երբեմն չաբաթ

մ'ալ միշտ կու տայ. գետինն ծածկուած է զեղեցիկ բոյսերով. նաև անտառի ծառերով, որսի կենդանիք առատ, բնակիչքն հանդարտք: Բայց հօս զերիտրտակը մեծ վնաս ըրած էին. ամբողջ զեղեր այրեր էին, և 80 մղոն տեղ քաղելով՝ բնակիչ չգտան, մինչ Պէյքըր իր առաջին ճամբորդութեան մէջ բազմամարդ գտեր էր տեղը: Տեղեկացաւ որ անկէ 20 մղոն հեռու, և նոյնպէս իրարմէ 20 մղոն հեռու գերեաց վաճառականք կան զինեալք, իբր 1100 հոգի. ասկէ աւելի մեծ զունդ մ'ալ աւելի հեռու. որոց զխաւորն իմանալով Պէյքըրի գալը՝ զրգուր էր մերձակայ ցեղերը զինքն սպաննելու, մասաւանդ Բամբազի ցեղին գլխաւորը. բայց որովհետև Պէյքըր առաջուց ծանօթ էր այս կողմիս և հիմա ալ իմացուց իր դիտաւորութիւնը, ժողովուորդն խնդութեամբ ընդունեցաւ զինքը:

Պէյքըր 200 հոգի միայն առած էր հետը, 300 հոգի ալ թողած 'ի բանակին Կոնստանդուպոլս. ուսկից 300 հոգի պատամբած յետ դարձեր էին 'ի Խարքում, 100 հոգի ալ մեռեր էին. հիմա հօս ալ թողով 100 հոգի 'ի զգուշութիւն, միւս հարիւրով զնաց 'ի Միսիյորոյ երկրի, որոյ մայրաքաղաքին (Մասինք) մէջ էր գերեվաճառաց գլխաւորն և զինքն սպաննել ուղղուց. տակայն Պէյքըր եկաւ հօն, և տեսաւ որ 8000 մարդ ժողոված են, կին ու տղայ չկայ. այս բանն թշնամութեան նշան էր. այլ ինքն սկսաւ բարեկամութեամբ վարուիլ, իմացնելով Նքիպտոսի կառավարութեան կամքը, և խեղճիւն գրօն ալ կանգնեց. հետն ալ տեսակ տեսակ վաճառքներ բերեր էր, որով տեղացեաց սիրտն որսաց, և սկսան փոխանակութիւն ընել: Տեղայն թագաւորն յորդորեց Պէյքըր որ 'ի Ֆաթիքոյ թողած մարդիկն և վաճառքն ալ բերէ, 300 ալ սալլ տուաւ բեռնակին. Պէյքըր ալ անոնց հետ 11 մարդ խաւրեց և զրեց 'ի Ֆաթիքոյ որ ամեն ունեցեալն առնուն գան. 25 հոգի ալ զերիտրտակներէն անոնց հետ զնացին: Անկէ 15 օր ետև իրիկուն մը Պէյքըրի ընծայ եկաւ եօթն թակի թթուաջ օջաղի ըմպել, զոր զնուորը շատ կ'ախորժէին, անոր համար անոնց խաւրեց Պէյքըր. բայց քանի մը վարկենէն զնդապետ մ'արտորոնք եկաւ իմացուց, որ ամեն խմողքն ալ թունաւորուեր են: Պէյքըր շուտով փոխողական զեղ հասուց, և տեսաւ որ 40 հոգուց չափ հիւանդ և զրեթէ անզգայ փառեր են. այն զիշեր մնացեալքն արթուն պահպանութեան կենցան: Երկրորդ օր Պէյքըր մարդ խաւրեց՝

ըմպելիքը խտրողը կանչելու. քիչ ատենէն մեծ աղաղակ մը լսեց և երկու հարուած հրացանի. անկէ ետեւ երեցան 7 կամ 8000 հոգի՝ ալէսպէս զինեալք, ոմանք ալ հրացաններ: Պէյքըրի բանակին պահապանք իմաց տուին և սկսան պատերազմել. ժամ և կէս տեւեց կռիւն. իշխպտական փոքր զունդն աղէկ հրեղէն դէնք և բռնկցընելու գործիք ունէին, որով քաղաքին չորս կողմը կրակի տուին, շատ մարդ ալ սպաննելով. երկրորդ օրը այն բազմամարդ տեղէն (Մասինտի) ծխամած աւերակ դարձեր էր:

Թէպէտ և այս յանկարծաւաս մեծ վրտանդէն աղատեցան, բայց ապագայն աւերի վտանգաւոր կ'երևէր. աղատելու մի միայն հնարք համարեց Պէյքըր՝ երկրին տիրող տոհմին (որ կոչուի Քամրազի) հակառակորդ իշխանին օգնել, այս ալ կոչուէր Ռիոնկա. բայց ասոր երթալու համար հարկ էր 90 միոն ճամբայ ընել, 9 կամ 10 ոտք բարձր խոտերու միջէն, միայն 100 մարդով, այնքան բազմաթիւ թշնամեաց մէջ. այլ հոն մնալն ալ նոյնպէս վտանգաւոր էր, վասն զի պաշարներն հատած էր, հազիւ 4 կամ 5 օրուան ուտելիք կար: Պէյքըր հրամայեց որ ով որ ինչ կրնայ կրել՝ առնու, մնացածը փնացընեն. առաջապահ կարգեց զնոյն 15 լաւ հրացանաւոր, անոնց ետեւէն ինքն իր կնան և եղբորորդւով ու 10 հրացանաւորօք. մնացածներն ալ մեծ ու պղզտիկ հրացանօք, ամենքն ալ բռնաւորեալ, (իւրաքանչիւր իբր 60 լիպրայ բռնամբ) բաց յառաջապահ և վերջապահներէն. ամենուն ալ պատուիրելով որ քովէ քով քալեն և իրարմէ չզատուին. 70 զուլա ալ ան. աստուն ունէին հետերսին: Առջի օրն արեւ թէ անդադար անձրեւեց և թրջից գիրենք. բայց իրիկունը դադրած տեղերներն ջուր չգտան. մէջերնէն մէկն ալ կորած էր: Երկրորդ օր պատուիրեց որ թողուն անասունները ուղածնուն ալէս երթալու, և իրենք թշնամեաց միտք գնեն, որ եօթն օր գիրենք նեղեցին, թէպէտ և չկրցան շատ վնասել. անոնց սովորութիւնն է այն խաւաւէտ երկրին մէջ տեղ տեղ խոտերը կտրել և բանակիլ, ու յանկարծ յարձրկի նիզակներով ճամբորդներուն վրայ, որք խոտեղէն պատով մ'արգելուած՝ չեն կրնար տեսնալ զանոնք: Պէյքըր պատուիրեց էր իրեններուն լուսթեամբ երթալ. որով առջի ճայնն որ լսէին՝ թշնամեաց յարձակման նշան էր, իրենք ալ կրակ կը թափէին անոնց վրայ: Ահա այս վտանգաւոր ճամբան կարեցին եօթն օրուան միջոց, քանի մը հոգի կորուսանելով և 30 ալ վիրաւորօք, և հասան յերկիրն Ռիոնկա. ու քանի մ'օր

դադրեցան դարմանուելու. հօն բանակեալ մը ձեւացնելով և 30 հոգի թողալով, 40 հոգի հետն առած հանդերձ կնան և եղբորորդւով Պէյքըր իր բարեկամէն ալ օգնականներն առած սկսաւ երթալ 'ի Փաթիթի իր մարդիկը գտնելու. 23 օր տաժանեկ ուղեւորութիւն մ'ըրին, ոչ գիշերը հանգչելու տեղ գտնելով և ոչ ուտելիք, բաց 'ի խոտերէ. վերջապէս յետ շատ դժարութեանց և վախերով հասան 'ի Փաթիթի, և գտան հօն թողուած 100 հոգին. իսկ այն 11 ընկերները զոր ասոնց խաւերը էր Պէյքըր սպաննուած էին սալլալարներէն, գաղտուկ պատուիրանաւ Քամրազի թագաւորին. ինչպէս որ կասկածէր Պէյքըր և կարծէր որ հօս թողածներն ալ սպաննուած ըլլան, ասոնք ալ կարծէին թէ ինքն իրեն մէկալ հարիւր մարդովն սպաննուած են:

Բայց այս միջոցին գերեվմահառն ալ չէին գաղտնէ. նախ տեղացիները գրգռելով ընդդէմ իշխպտացու, և երբ անոնք չհասանեցան, անոնց գեղերն այրելով, և ոմանց կանայքը սպաննելով. յետոյ պատուատուելով Պէյքըրի զօրաց վրայ յարձրկելու խաբէութեամբ, ինչպէս ըրին ալ. 27) հոգի աղէկ զինուած՝ չկարծուած ժամանակ վրայ հասան, և հրացաններն սարսափելով՝ եօթն մարդ սպաննեցին իշխպտական գընդէն. բայց Պէյքըր չուտով իրեններուն հրաման տալով՝ դէմ հանեց, և նորահնար (ասդան) հրացանաց զօրութեամբ 44 հոգի ընկան 'ի թշնամեաց. տեղացիք կ'ուզէին մնացեալներն ալ սպաննել, բայց Պէյքըր չթողուց, ըսելով որ այսուհի հետեւ գուց իշխպտոսի իշխման վրայ մարդիկ էք, ինքն զձեզ կը պաշտպանէ, և չի թողուր որ գերի դառնայ նեղէն զձեզ: Եւ յիշատի այս պատերազմէն ետեւ՝ շտեմնուեցան գերուց վաճառականք. Պէյքըր անոնց ժողոված փողոկը գրաւել իբր 30,000 ստերլինի գին. և մարդ խաւրեց 'ի կոնստնուպոլ որ իրեն զօրք հասցընեն. չորս ամիս անցաւ ինչուան որ եկան: Այն միջոցին ինքն սկսաւ նուաճած երկիրներուն կարգ կանոն դնել, որչափ որ կարելի էր: Ամենէն գոտուարին բանն եղաւ անոնցմէ հարկ առնուլ իրեն 'ի հպատակաց. անոնք կարծէին որ իրենցմէ բան ուղողը թշնամի է, և միայն տուողն բարեկամ: Պէյքըր ուրիշ ճար չգտաւ զանոնք համոզելու՝ բայց և թէ իր զինուորաց գիտուց և զօրութիւնը յիշեցնելու, որոց փորձը այցը տեսեր էին. այն ատեն հաւանեցան զինուորները կերակրելու՝ որ գիրենք պաշտպանեն. և ահա այսպէս ցորենի հարկ առաւ անոնցմէ: Այս բանիս ալ կարգ դրաւ որ ամեն լուսնի լրման հա-

տուցանեն ցորենը (որովհետև ուրիշ տու-
մար չունին)։ ծերերն ազատ ըլլան հարկ
տալէ, վասն զի աշխատելու ոյժ չունին։
Տեղացիք սկսան ըստ ժամանակին անվրէպ
հատուցանելու իրենց սահմանեւ չա-
փով։ ցիւղերուն մէջ թշնամութիւն և կոխ-
ադարեցաւ։ առանց տէրութեան հրամանին
պատերազմ հրատարակել սկիսի չըլլար։
բոլոր այն երկիրն ուսկից անցան Յգիւս-
տացիք՝ խաղաղացաւ։

Այս տեղ Պէյքըր գոհութեամբ կ'ըսէ,
թէ երբ Սնդգիոյ ելած կու գայի՝ տըքով
ընդեր կը ստեղծէի, ինչպէս որ չստեղծ
ալ կ'ընէն, բայց դառնալուս ատեն կրնամ
Աստուծոյ փառք տալ՝ որ իմ բերդս աղէկ
հաստատուեցաւ։ Երբոր իր կանչած մար-
դիկն եկան Պէյքըր դարձաւ 'ի կոնտրո-
լոյ, առանց թշնամութեան անցնելով Պա-
րեաց երկրէն։ և իրեն տեղ թողուց զըն-
դապետ մը։ Միայն վախ մ'ունէր որ իր
սկսած և կարողուցած գործն չխափանուի
և չաւրուի՝ Եգիպտոսի տէրութեան բնիկ
հպատակաց մէկուն յանձնուելով իշխա-
նութիւնն։ կը վախէր որ խէտիմէ քրիս-
տոնէից և օտարազգեաց շատ երես տուող
չերեւելու համար՝ իրեններէն մէկը զնէ-
բայց նա ուրիշ Անգղիացի մը կարգեց փո-
խանակ Պէյքըրի, որպէս զի, կ'ըսէ, Սնդ-
գիացոյ մը սկսածը՝ առաջ տանի ուրիշ
Սնդգիացի մը։

Եւտ այսչափ տեղեկութեանց՝ Պէյքըր
շնորհակալ եղաւ հանդիսական ունկնդրաց,
որ անսովոր բազմութեամբ եկեր էին զին-
քը բարեւելու։ և ուզեց համարիլ թէ թա-
գաժառանգ իշխանին համար էր այն բազ-
մութիւնն, սակայն դարձեալ այս ալ ի-
րեն մեծ պատիւ էր։ Այս խօսքիս՝ թագա-
ժառանգ իշխանն ելաւ 'ի բեմ՝ ատենախո-
սութեան, և բոլոր ժողովին կողմանէ շնոր-
հաւորեց Պէյքըրի յաջողութեամբ դարձը,
և շնորհակալեցաւ իր տուած յստակ տե-
ղեկութեանց, և զինքն իսկ յիշելուն հա-
մար խոստովանեցաւ որ յիրաւի Եգիպտո-
սի խէտիմին հետ խօսեր էր այս գոր-
ծոյս վրայ, այլ միայն մարգաթիրական
դիտմամբ։ յիշեց Եգիպտոսի իշխանին մեծ
վստահութիւնը Պէյքըրի վրայ, և աւելի
մեծ փափագը՝ զերեւմանաութիւնը բոլո-
րովին դադրեցնելու։ որոյ համար եթէ մեծ
գժարութեան կար՝ Գահիրէէն դուրս հա-
զարաւոր մղոն հեռու տեղէ էր։ կրկին
ինչպակցելով Պէյքըրի յաջողութեան հա-
մար, ինչուան հիմա գեղը ճարտար ճամ-
բորդ և դիտուն աշխարհագիր մը կը ճա-

նաչէինք, ըսաւ, այսուհետեւ բարերար
մարդասէր մ'ալ։

Եւտ արքայուք իշխանին՝ ընկերութեան
նախադաշն ալ քաղաքավարական շնորհա-
ւորութիւններ ըրաւ Պէյքըրի, անոր տիկ-
նոջ և ուղեկցացը, և նաև Անգղիական
իշխանին։ Պէյքըր ալ նորէն շնորհակալե-
լով անոնց՝ յիշեց որ գովութեան արժանի
էր և իր ուղեկից եղբորորդին, որ իրենց
քալած տեղերուն աստղաբաշխական կամ
աշխարհագրական գիրքը նշանակեր էր
անտարակուսելի ճշգրտութեամբ։

Գուցէ չգիտեն ոմանք 'ի մեր ընթերցո-
ղաց որ Սնդգիոյ Աշխարհագրական ընկե-
րութիւնն ամեն նման ընկերութիւններէ
մեծ և և բազմընկեր։ իրեն ընդհանրական
Պաշտպան անուանած է թագուհին, և փո-
խանորդ Պաշտպան այս թագաժառանգ
իշխանը, որ ներկայ գտուեցաւ և երբեմն
գտուի ընկերութեան ժողովոց մէջ։ Ո՛ր-
քան պատուական են այսպիսի ժողովք՝
ուր թագաժառանգը և զրեթէ թագաւորը
ալ իբրև հասարակ գիտնականը կ'ընկե-
րակցին և կը խօսակցին։ ո՞րչափ մանա-
ւանդ պատուականագոյնք ժողովոց պատ-
ճառքն և կերպն, և խաղաղական ու պի-
տանի վայելքն։

ՇԻՐԻՄ ԹԷՆՈՂՈՐԻԿՈՍԻ Ի ՀՌԱԽԵՆՆԱ

Այս մեծակառոյց ու գեղեցկաշէն
չիրիմ՝ զոր 'ի պատկերի կը ներկայացը-
նենք ընթերցողաց, թէ ողորկու թա-
գաւորին տապանն է, շինեալ Հռաւեն-
նա քաղաքին մօտ։ սա ճարտարապե-
տական այնպիսի եղական ոճ մ'ունի՝
որ կ'որոշուի ամեն ժամանակաց չիրիմ-
ներէն, ուստի և մեծ համբաւ։ Ամբողջ
շէնքը շինուած է 'ի միակտուր վիմաց,
և չբեղութեան ու մեծութեան այնպի-
սի վեհ երևոյթ մ'ունի, որ կը հիացը-
նէ զամենայն ճարտարապետս ու զար-
հեստաւորս նորոյ աշխարհիս։ բայց
աւելի զարմացման արժանի իր հսկա-
յաձև գմէթն է, որ կը պսակէ բոլոր
շէնքը, և որուն տրամագիծն երեսուն
և չորս ոտնաչափ է։ ինչպիսի միջոցաւ